ԿՈՐՈՒՍՏ

# ԲԱՐԻ՛ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ, ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

(Սկիզբը` 1-ին էջում)

Շառլ Ազնավուրի հուղարկավորության օրը Հայաստանում հայտարարված է սգո օր:


Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցում (2005 թ.)

Երեկ` հոկտեմբերի 5-ին, Փարիզում տեղի է ունեցել Շառլ Ազնավուրի հոգեհանգստի արարողությունը, որին մասնակցել են Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Ներկա են գտնվել նաեւ Ֆրանսիայի կառավարության անդամներ, Ֆրանսիայում հավատարմագրված տարբեր երկրների դեսպաններ, աշխարհի բազմաթիվ պետություններից այդ առիթով ժամանած լեգենդար երգչի երկրպագուներ:

Նշենք, որ հայ-ֆրանսիական բարեկամության խորհրդանիշ Շառլ Ազնավուրը այդ եվրոպական երկրի առաջին երաժիշտն է, ում պատվին Փարիզում տեղի է ունենում Ազգային հարգանքի տուրքի արարողություն:

Շառլ Ազնավուրը (Շահնուր Վաղինակ Ազնավուրյան) ծնվել է 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզում, գաղթականների ընտանիքում: Հայրը` Միշան, ծնվել է Վրաստանի Ախալցիխե քաղաքում, մայրը` Թուրքիայի Իզմիր քաղաքում:

Ազնավուրի կյանքում շրջադարձային նշանակություն է ունեցել հանրահայտ ֆրանսիացի երգչուհի Էդիտ Պիաֆի հետ հանդիպումը, ով եւ ճակատագրական դեր է խաղացել նրա կայացման մեջ: Շառլը երգեր է գրել ու զուգերգել նրա եւ ժամանակի ճանաչված երգիչների համար ու հետ, շրջագայել համերգներով: Համընդհանուր ճանաչման է արժանացել 1959 թվականին, Փարիզի «Օլիմպիա» համերգասրահում ելույթից հետո: Ազնավուրը երգել է աշխարհի գրեթե բոլոր լավագույն համերգասրահներում: Նա 1000-ից ավելի երգերի հեղինակ է` «Սա է վերջը», «Մամա», «Իզաբել», «Երկու կիթառ», «Սիրուց հետո», «Ջահելություն», «Բոհեմա» եւ այլն: Նրա երգերի սկավառակները թողարկվել են միլիոնավոր օրինակներով, բանաստեղծությունները թարգմանվել եւ լույս են տեսել առանձին գրքերով: Ազնավուրը երգել է Լուչանո Պավարոտիի, Պլասիդո Դոմինգոյի, Լայզա Մինելիի, Միրեյ Մաթյեի, Պատրիսիա Կաասի հետ...


Սայաթնովյան Վարդատոն (1996 թ.). Ելույթ են ունենում Շ.Ազնավուրը եւ լոսանջելեսցի քահանա Աբրահամ Չափարյանը


Ախալցիխե. Ռաբաթ (2012 թ.)

Դստեր` Սեդայի հետ կատարել է Սայաթ-Նովայի «Աշխարհումս» երգը` իրականացնելով իր վաղեմի երազանքը` երգելով հայերեն: Ազնավուրը նկարահանվել է 60-ից ավելի կինոնկարներում:


Ախալցիխե. Համերգի ժամանակ (2012 թ.)

1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո, Շառլ Ազնավուրը բազմիցս այցելել է Հայաստան, եղել աղետի գոտում: Փարիզում ստեղծել է երկրաշարժից տուժածների օգնության «Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամը, որի ներկայացուցչությունը բացել է Երեւանում: Երգիչ եւ կոմպոզիտոր Ժորժ Գառվարենցի հետ գրել է «Քեզ համար, Հայաստան» երգը, թողարկել տեսահոլովակ Ֆրանսիայի 90 երգչի ու դերասանի մասնակցությամբ:


Թբիլիսիի Քորթիարդ Մերիոտ հյուրանոց (2012 թ.)

1995 թվականից եղել է Հայաստանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով պատվավոր դեսպանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ում` Հայաստանի մշտական պատվիրակը: 2009-ին նշանակվել է Շվեյցարիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան:

Ազնավուրի անունով կոչվել է հրապարակ Երեւանում (2001թ), իսկ 2000թ. Գյումրիում, Շառլի անվան հրապարակում, կանգնեցվել է նրա հուշարձանը: Ազնավուրի մոմե արձանը 2004թ. դրվել է մադամ Տյուսոյի թանգարանում, իսկ 2009թ. Երեւանում գործում է Ազնավուրի անվան թանգարան:

### ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հոկտեմբերի 3-5-ը Վրաստանում Հայաստանի դեսպանատանը բացվել էր Սգո հուշամատյան, ուր աշխարհահռչակ հայորդուն` Շառլ Ազնավուրին, գրառումներով իրենց սրտի խոսքն էին ուղղում Վրաստանում հավատարմագրված մի շարք պետությունների դեսպաններ, վրաց մտավորականության եւ թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Երեկ տեղի ունեցավ մոմավառություն, աղոթք բարձրացվեց Շառլ Ազնավուրի հոգու հանգստության համար: Հավաքվածներին խոսքով դիմեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Հոկտեմբերի 2-ին թբիլիսահայերը Վրաստանում, Ֆրանսիայի դեսպանատան մոտ, մոմավառությամբ, ծաղների խոնարհումով եւ աղոթքով իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հայ-ֆրանսիական բարեկամության խորհրդանիշ Շառլ Ազնավուրի հիշատակին:

### ԳԻՈՐԳԻ ԿՈՊԱՁԵ. «ԱԶՆԱՎՈՒՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ ՑԱՎ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅ, ԱՅԼ ՆԱԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ»

Հոկտեմբերի 5-ին, Ախալցիխեի հայկական գերեզմանատանը, ուր հանգչում են Շառլ Ազնավուրի հայրական կողմից պապն ու տատը, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Ներկաներն աղոթեցին Ազնավուրյան ընտանիքի համար, ծաղիկներ խոնարհեցին պաշտելի երգչի նախնյաց շիրիմներին:

Հոգեհանգստյան արարողությանը ներկա էր նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գիորգի Կոպաձեն: Նա իր խոսքում մասնավորապես ընդգծեց, որ Ազնավուրի կորուստը ցավ է ոչ միայն հայ, այլ նաեւ վրաց ժողովրդի համար` խոստանալով, որ քաղաքապետարանում, սակրեբուլոյի պատգամավորների հետ միասին առաջ է քաշելու Ախալցիխեում Շառլ Ազնավուրի անունով փողոց անվանակոչելու հարցը:


Ախալցիխե. Ազնավուրի նախնիների շիրիմների մոտ (2018 թ.)

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԲԱՑՎԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

*2019 թվականի մայիսի 22-ին` Շառլ Ազնավուրի ծննդյան 95-ամյակի օրը, Թբիլիսիում կբացվի լուսանկարչական ցուցահանդես` նվիրված հայկական ծագումով ֆրանսիացի, լեգենդար երգիչ ու երգահան Շառլ Ազնավուրի Վրաստան կատարած 3 այցերի մասին: Երկիր, որտեղ ծնվել ու մեծացել է նրա հայրը, որտեղ հանգչում են մեծ շանսոնյեի տատն ու պապը: Այդ մասին ՏԱՍՍ-ի թբիլիսյան թղթակցին ասաց Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամավոր, «Վրաստանի հայերի միություն» ՀԿ առաջին փոխնախագահ, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:*

***- Շառլ Ազնավուրը Վրաստան է այցելել 1996, 2005 եւ 2012 թվականներին: Ինձ բախտ վիճակվեց նրան ուղեկցել մեր երկրով, նա եղավ Թբիլիսիում եւ Ախալցիխեում` Վրաստանի հարավում գտնվող քաղաքում, որտեղ ծնվել ու մեծացել է նրա հայրը, որտեղ թաղված են երգչի տատն ու պապը, որոնց շիրիմները խնամում են հեռավոր ազգականներն ու տեղի բնակիչները:***

Բայբուրթյանը նշեց, որ դժվար է խոսքերով արտահայտել այն զգացումները, որոնք վերապրեց Ազնավուրը Վրաստանում գտնվելու օրերին:

***- Նա պատմում էր, որ ողջ կյանքում երազել է այցելել Ախալցիխեի գերեզմանատուն, որտեղ հանգչում են նրա նախնիները, լինել Թբիլիսիում, որտեղ մինչեւ Հունաստան տեղափոխվելը (1921թ.), տասը տարուց ավելի ապրել է Ազնավուրյանների մեծ ընտանիքը,***- հիշեց Վան Բայբուրթյանը:

Նրա խոսքով, 2005 թվականի մայիսին Շառլ Ազնավուրին շնորհվեց Ախալցիխե քաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը:

***- Այն ժամանակ Ախալցիխեում նրան հանդիսավորապես հանձնեցին համապատասխան փաստաթուղթ: Ի պատիվ նրա, Ախալցիխեում տեղի ստեղծագործական համույթների ուժերով համերգ տրվեց,***- նշեց Բայբուրթյանը:

2012 թվականի օգոստոսին, վերջին անգամ Ախալցիխե այցելության ժամանակ, Ռաբաթ բերդ-ամրոցի հանդիսավոր բացմանը մեծ համերգով հանդես եկավ Շառլ Ազնավուրը:

***- Ախալցիխեում Ազնավուրի ելույթն անցավ ամֆիթատրոնում, որը կառուցվել էր Ռաբաթ միջնադարյան ամրոցային համալիրի նորացման նախագծի շրջանակներում: Դեռ այն ժամանակ ամֆիթատրոնի մոտ բացվել էր անվանական «Աստղ», որը ընդգծում էր Ազնավուրի ավանդը համաշխարհային մշակույթում,***- ասաց Բայբուրթյանը:

Նա նշեց, որ Թբիլիսի եւ Ախալցիխե այցելելիս` Ազնավուրն առանձնակի ուշադրությամբ ծանոթանում էր այն բացառիկ լուսանկարներին, որոնք առնչվում էին նրա ծնողների, տատի ու պապի կյանքին, լուսանկարներին, որոնք պահվում էին Վրաստանում ապրող հեռավոր ազգականների մոտ:

***- Այդ լուսանկարները, ինչպես նաեւ այն նյութերը, որոնք առնչվում են Վրաստանում Ազնավուրյանների ընտանիքի կյանքին ու գործունեությանը, 1996, 2005 եւ 2012 թվականներին հանրահայտ երգչի ու երգահանի Թբիլիսի եւ Ախալցիխե կատարած այցերին, կներկայացվեն Թբիլիսիում 2019 թվականի մայիսի 22-ին, լուսանկարչական ցուցահանդեսում: Այդ մասին արդեն պայմանավորվածություն կա Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի առաջին տեղակալ Միխեիլ Գիորգաձեի հետ,***- հայտարարեց Բայբուրթյանը:

Նա նշեց, որ 2012 թվականին` Վրաստան կատարած վերջին այցի ժամանակ, Ազնավուրն ասաց, որ չի կարողանա այստեղ գալ իր 90-ամյակին, թեեւ 2019-ին` իր ծննդյան 95-ամյակին, կայցելի Վրաստան:

***- Ցավոք, նա չհասավ հոբելյանական այդ տարեթվին, սակայն, ի հիշակակ նրա, մենք Թբիլիսիում ցուցահանդեսը կանցկացնենք 2019 թվականի մայիսի 22-ին` նրա ծննդյան 95-ամյակի օրը,- նշեց Բայբուրթյանը` ընդգծելով, որ արդեն սկսվել են աշխատանքները նյութերի հավաքման եւ միջոցառման կազմակերպման ուղղությամբ:***

***ԹԵՆԳԻԶ ՊԱՃԿՈՐԻԱ***
***ՏԱՍՍ-ի թղթակից***

***Հոկտեմբերի 3. Թբիլիսի***

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ



# ՆԱԶԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ. «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՃԵԼԻ ՈՒ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԸ ՉԳԻՏԻ»

*Հոկտեմբերի 5-ը «Ուսուցչի միջազգային օրն» է: Ուսուցիչներին նվիրված տոնը ընդգրկված է ՄԱԿ-ի կողմից նշվող միջազգային օրերի ցանկում եւ նշվում է ամեն տարի, դեռեւս 1994 թվականի հոկտեմբերի 5-ից: Տոնը խորհրդանշում է ուսուցիչների կրթության եւ զարգացման բնագավառում ունեցած հսկայական ներդրման ճանաչումը, ընդունումն ու գնահատումը եւ միտված է՝ հասնելու հասարակական ավելի լայն ճանաչման: Ներկայումս «Ուսուցչի միջազգային օրը» նշվում է աշխարհի ավելի քան 100 երկրում, այդ թվում՝ նաեւ Վրաստանում ու Հայաստանում:*

Օրվա խորհուրդով ուզում ենք ներկայացնել մի ուսուցչի, ում անունը այսօր սիրով, երախտիքով, հպարտության խորին զգացումներով են հիշատակում նրա երբեմնի հազարավոր սաները ու նաեւ Թբիլիսիի եւ Վրաստանի տարբեր անկյուններում ներկայումս հայոց լեզու ու գրականություն դասավանդող բազում ուսուցիչներ...

Դա Նազիկ Ոսկանյանն է, ով այս օրերին կնշի ծննդյան 90 եւ մանկավարժական գործունեության 60-ամյակները:

1951թ., Լենինականի (այժմ՝ Գյումրի) Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, Նազիկ Ոսկանյանն իր հարազատ Թբիլիսի վերադարձավ՝ մասնագիտական հիմնավոր գիտելիքներով ու սկսնակ ուսուցչի համարձակ երազանքներով զինված: 1954-2006 թվականներին աշխատեց Հավլաբար թաղամասի Ծուրծումիա փողոցում գտնվող թիվ 93, իսկ վերջինիս փակվելուց հետո, 2006-2010-ին՝ մայրաքաղաքի կենտրոնում գտնվող թիվ 104 դպրոցներում: Զուգահեռաբար, աշխատեց նաեւ Վիրահայոց թեմին կից Կիրակնօրյա դպրոցում:

Վեց տասնամյակ, ընդգծենք, առանց նույնիսկ մեկօրյա բացակայության, Նազիկ Ոսկանյանը մտնում էր դասարան՝ ուսուցանելու մայրենի լեզու եւ գրականություն: Այդ առարկաների փայլուն մասնագետը շուտով, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության կողմից նշանակվում է հայկական դպրոցների մեթոդիստ-ուսուցչի պաշտոնում, միաժամանակ ընդգրկվում Թբիլիսիի Ա.Պուշկինի (այժմ՝ Իլիայի անվան) անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի ընդունելության եւ ավարտական պետական քննությունների հանձնաժողովի կազմում:

Նազիկ Ոսկանյան ուսուցչի՝ կրթության ոլորտում ունեցած ավանդը, հայապահպանության գործունեությունը, կազմակերպչական հմտությունները արժանիորեն խրախուսել են թե' Վրաստանի, թե' Հայաստանի կրթության ու գիտության նախարարությունները:Դրա փաստումն են տարբեր տարիներին ստացված դիպլոմները, վկայագրերը, պատվոգրերն ու բազմամյա եւ բարեխիղճ աշխատանքի համար տրված կառավարական բարձրագույն պարգեւը՝ «Աշխատանքի վետերան» մեդալը:

Բազմամյա եւ փորձառու ուսուցչի հետ մեր երկար զրույցը բարյացակամ մթնոլորտում ընթացավ:

- ***Տիկին Ոսկանյան, ինստիտուտից հետո, որտե՞ղ ստացաք մանկավարժի մկրտությունը:***

- Երկու տարի ուղեգրով, հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ աշխատեցի Հայաստանի Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի միջնակարգ դպրոցում: Սիրով եմ հիշում իմ կյանքի այդ անմոռանալի ու կարեւոր շրջանը: Դա նույն Կողբ գյուղն էր, որը հիշատակվում է Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպում: Պատմական գյուղը, խոստովանեմ՝ երիտասարդ մանկավարժիս մշտապես առանձնակի հարգանքի ու պատասխանատվության էր կոչում եւ մղում էր աշխատանքային կրկնակի բարեխղճության:

- ***Երբեւիցե չե՞ք զղջացել այդչափ պատասխանատու եւ մեծ նվիրում պահանջող մասնագիտության ընտրության համար:***

- Երբե՜ք: Ասեմ, որ մանկավարժությունից հաճելի ու երջանիկ մասնագիտություն աշխարհը չգիտի: Դեռ երեխա օրերից, «դասատու-դասատու» եմ խաղացել, եւ ուսուցչությունը ասես ներդրված է եղել ինձանում: Գիտեք, աշխատանքում ես «հայտնաբերել» եմ, այսպես ասած, երջանկության տարբերակներ: Դրանցից մեկը, օրինակ, մեթոդիստ-ուսուցիչ լինելով՝ Թբիլիսիի Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի պրակտիկանտ ուսանողների հետ հաճախակի շփումն էր, սեփական փորձը սկսնակ ուսուցչին փոխանցելուց ստացած բերկրանքը: Դա՝ մայրաքաղաքի վրացական կամ ռուսական դպրոցների հետ համատեղ միջոցառումներին փոխվստահության, բարեկամական անհրաժեշտ մթնոլորտի երջանկությունն էր, ինչը այսօր պակասել է: Զղջալու առիթ չեմ ունեցել, որովհետեւ աշխատանքային առօրյաս հագեցված էր...

- ***52 տարի Թբիլիսիի թիվ 93 դպրոցում եք աշխատել. ինչի՞պիսի՞ն էր այդ շրջանը՝ աշխատանքային առումով:***

- Իմ հուշերում դա թբիլիսյան հայկական դպրոցների ծաղկուն շրջանն էր, չեմ կարող առանց սրտացավության հիշել, որ անցյալ դարի 60-80-ական թվականներին Թբիլիսիում գործում էին մոտ 15-20 հայկական դպրոցներ, որոնք կապված էին միմյանց հետ եւ ապրում էին դպրոցական աշխույժ, նպատակասլաց կյանքով: Դրանք լեփ-լեցուն էին, ունեին զուգահեռ դասարաններ: Երբ 2006-ին, Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի տնօրեն Կարինե Մանուկյանը հրավիրեց ինձ իրենց դպրոցում աշխատելու, քաղաքում արդեն մնացել էր ընդամենը 8 հայկական դպրոց, այսօր դրանք, ցավոք, երկուսն են: Ցավալի ու շատ տխուր երեւույթ է, ես ընդունում եմ, որ կան տարբեր հիմնախնդիրներ եւ դրանցից ամենագլխավորը, չկարողացանք համոզել ծնողներին՝ իրենց երեխաներին բերել հայկական կրթօջախ:

- ***Ըստ Ձեզ՝ այդ խնդիրը լուծելի՞ է...***

- Ինչպես էլ հարցին մոտենանք, մեղավորը, առաջին հերթին, մենք ենք, կրկնվեմ՝ ծնողները, երեւի քաղաքում գործող հայկական հասարակական կազմակերպությունները: Լավ կլինի, որ դպրոցական կամ համայնքային միջոցառումներին ընդգրկվեն ոչ հայկական կրթությունը գերադասած ծնողներ, ինչո՞ւ չէ, նաեւ երեխաներ: Այդ տեսակետից լավ գործ են կատարում Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնը, Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը, որ շենքի վերակառուցման պատճառով ու սեփական բեմը չունենալով, չի լռում եւ, իհարկե, մեր սիրելի «Վրաստան» թերթը, «Արեւիկը»: Առանձնապես ուզում եմ ողջունել Կիրակնօրյա դպրոցի գործունեությունը, նրա միջոցառումները: Կիրակնօրյա դպրոցում դասավանդելիս՝ հիշում եմ, երեխաների կողքին մայրենի լեզուն էին սովորում նաեւ ծնողները: Եվ ամենակարեւորը, ինչը ինքնին խթանում էր մեր աշխատանքը, շատերը ռուսական դպրոցներից տեղափոխվում էին հայկական դպրոց:

- ***Ի՞նչ կմաղթեք մեր ընթերցողներին:***

- Պահպանե'ք հայկական դպրոցը: Ջերմ սիրով կապվեք հայ գրականությանը, հայ մշակույթին...

- ***Տիկին Ոսկանյան, մենք գիտենք, որ հոկտեմբերի 8-ին, լրանում է Ձեր ծննդյան 90-ամյակը: Թույլ տվեք խմբագրության ու մեր թերթի հազարավոր ընթերցողների անունից շնորհավորել Ձեր պանծալի հոբելյանը: Ձեզ մաղթում ենք քաջառողջություն, անխռով ու երկա՜ր-երկար տարիների կյանք:***

*Զրուցեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*


ႫႠႢႧႨ
MAGTI

**ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ**
ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ,
ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 99 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի
խոսակցություն Մագթիկոմի բջջային
ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:
www.magticom.ge


ԿՐԹԱԿԱՆ

# ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՓՈՒԼ՝ «1+4» ԾՐԱԳՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հոկտեմբերի 8-ին մեկնարկում է վրացերեն լեզվի «1+4» ծրագրից օգտվող ուսանողների ստաժավորման ծրագրի աշնանային փուլը:*

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი

Ինչպես տեղեկացրին Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակից, 2018-ի աշնանային ընդունելության համար 500 թափուր տեղ է սահմանված:

Գերատեսչության տեղեկատվությամբ, ծրագիրը Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու նախաձեռնությամբ, իրականացվում է 2017 թվականից: «1+4» ծրագրով վրաստանյան բուհերում սովորող երկրի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն են ստանում ստաժավորում անցնել երկրի պետհաստատություններում (կենտրոնական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում):

Ստաժավորման գործընթացն անցնելու է մրցութային կարգով: Դիմումներն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 22-ը:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Շարմազանովը նշել է նաեւ, որ այդ նախագիծը արտահերթ ընտրություններին դեմ չէ:

- Այս օրենքը նրա համար էր, որպեսզի Ազգային ժողովը կարողանա իր սահմանադրական լիազորությունները կատարել,- ասել է ՀՀ ԱԺ փոխնախագահը:

ԱԺ-ի մոտ անցկացված հանրահավաքին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է 2018 թվականի նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին:

- Այդ ընտրությունները պետք է տեղի ունենան անհետաձգելիորեն,- ընդգծել է ՀՀ վարչապետը:

Ավելի ուշ, հոկտեմբերի 3-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովի բակում հավաքված քաղաքացիներին ներկայացրել է Ազգային ժողովի խմբակցությունների հետ բանակցությունների արդյունքները:

- Այսօր ցույց տվեցինք, որ արտահերթ ընտրությունները համաժողովրդական պահանջ են, իսկ այն քաղաքական ուժերը, որոնք դեմ կգնան այդ քաղաքական պահանջին, ուղիղ պատերազմ են հայտարարում սեփական ժողովրդին: Իմ տպավորությամբ ՀՀԿ, ՀՅԴ եւ «Ծառուկյան» խմբակցությունների մեր գործընկերների կողմից այս ուղերձն ընկալված է,- ընդգծեց Փաշինյանը:

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ԽՈՍԵՑ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԱԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Հոկտեմբերի 2-ի հանրահավաքին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ հրաժարական կտա, երբ ՀՅԴ-ն եւ ԲՀԿ-ն ներկայացնող նախարարների ու մարզպետների աշխատանքից ազատելու մասին որոշումը դե-յուրե կմտնի ուժի մեջ:*

Հայաստանի վարչապետի խոսքով, նա այդ քայլին կգնա այն բանից հետո, երբ աշխատանքից ազատվեն ՀՅԴ եւ ԲՀԿ ներկայացուցիչ նախարարներն ու մարզպետները:

- Երբ նշված նախարարների ու մարզպետների աշխատանքից ազատելու մասին որոշումը դե-յուրե կմտնի ուժի մեջ, դրանից հետո ես հրաժարական կտամ վարչապետի պաշտոնից: Նախ՝ որպեսզի որեւէ մեկը չմտածի, թե ես կառչած եմ ՀՀ վարչապետի պաշտոնից: Դրանից հետո 7+1 օրվա ընթացքում ԱԺ-ն պետք է ընտրի նոր վարչապետ: Եթե այդ ընթացքում չընտրվի նոր վարչապետ, պետք է եւս 7+1 օր ժամանակ անցնի, եւ ընտրի նոր վարչապետ: Եթե այդ ընթացքում չընտրեց նոր վարչապետ, տեղի են ունենում արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Եթե կպարզվի, որ ժողովուրդը կանգնած է հանուն արտահերթ խորհրդարանական ընտրությունների, մենք ժողովրդի հետ կկարողանանք թույլ չտալ, որ խորհրդարանն ընտրի նոր վարչապետ: Բայց հրաժարականից հետո ողջ ընթացքում ես շարունակում եմ կատարել ՀՀ վարչապետի պարտականությունները. այդպես է ՀՀ սահմանադրությամբ,- ասաց նա:

Նիկոլ Փաշինյանը ՀՀ նախագահին հորդորել է չստորագրել ԱԺ-ի կողմից ընդունված ԱԺ կանոնակարգ օրենքի փոփոխությունները:

- Պետք է հանրապետության նախագահը ստորագրի այդ օրենքը կամ դիմի Սահմանադրական դատարան՝ դրա սահմանադրականությունը վիճարկելու համար: Կարծում եմ՝ ինձ կլիազորեք, որ ես հիմա այստեղից դիմեմ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին՝ կոչ անելով, որ նա այդ օրենքը չստորագրի ու դիմի Սահմանադրական դատարանին,- ասաց Փաշինյանը:

## ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ»

*Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող նախագահ Արմեն Սարգսյանը ուշադրությամբ հետեւում է Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին:*



Այս մասին հայտնեց նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունը:

«Հանրապետության նախագահը հեռախոսազրույցներ է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի հետ եւ քննարկել ստեղծված իրավիճակը:

Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին նախագահ Սարգսյանը կանդրադառնա Երեւան վերադառնալուն պես՝ նախաձեռնելով խորհրդակցություններ կառավարության եւ Ազգային ժողովի ղեկավարության հետ:

Նախագահը հորդորում է լինել զուսպ եւ հանդուրժողական միմյանց հանդեպ, եւ համոզված է, որ ստեղծված իրավիճակը հնարավոր է եւ պետք է հանգուցալուծել սահմանադրության եւ օրենքների շրջանակում՝ բանակցության եւ երկխոսության ճանապարհով:

Միացյալ Նահանգներից Հանրապետության նախագահը կմեկնի Փարիզ՝ մասնակցելու աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի հոգեհանգստի եւ հուղարկավորության արարողություններին»,- ասված է նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության տարածած հաղորդագրությունում:

## ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ. «ՑԱՎՈՔ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉՀԱՍԱՆՔ»



*Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը վստահեցնում է, որ վերջին շրջանում իր պահվածքով նպաստել է, որպեսզի Ազգային ժողովում կայանա երկխոսություն, սակայն դա տեղի չի ունեցել:*

Անդրադառնալով ԱԺ կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրինագծի օգտին քվեարկությանը՝ Արա Բաբլոյանը նշեց:

- Բարեբախտաբար, ինչ-որ ժամանակ ես ու Նիկոլ Փաշինյանը, կարծեք, հասել էինք համաձայնության, ու քաղաքական առումով ինձ համար մեծ ուրախություն ու բավականություն էր, երբ վարչապետը Նյու Յորքից հայտարարեց, որ պետք է հետ գա եւ ԱԺ-ում քաղաքական ուժերի հետ քննարկենք հարցը: Հայտնի էր, որ ուժերի մի մասը, ասենք՝ «ԵԼՔ»-ը, կողմնակից է վաղ ընտրություններին, մյուս մասը՝ ուշ: Բայց բոլոր խմբակցությունները հայտարարել էին, որ պատրաստ են քննարկել արտահերթ ընտրությունների հարցը,- ասաց Բաբլոյանը՝ հավելելով, որ մինչ այդ, հանդիպում է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, որից հետո են հանդես եկել հայտարարությամբ, որում, ըստ նրա, նույնպես մի քանի կետով ու խաղաղ ձեւով ներկայացված են ժողովրդավարական ամբողջ մոտեցումները:

Ազգային ժողովը հոկտեմբերի 2-ին՝ 67 կողմ ձայնով, ընդունել է ԱԺ կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրինագիծ, որից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանրահավաք է հրավիրել Բաղրամյան պողոտայում:

## ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ. «ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՎՏԱՆԳՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»



*Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Ֆելիքս Ցոլակյանը կոչ է անում բոլորին խոհեմություն ցուցաբերել ստեղծված ներքաղաքական իրավիճակից դուրս գալու համար: Ֆելիքս Ցոլակյանն այս մասին գրառում է կատարել «Ֆեյսբուքյան» իր էջում:*

- Հարգելի հայրենակիցներ, ստեղծված իրավիճակը, իրոք, մտահոգիչ է, հատկապես այն առումով, որ չի բխում մեր ժողովրդի իրական շահերից: Օրենքի ընդունումն ու դրա կիրառումը կարող է ավելորդ լարվածության պատճառ դառնալ՝ վտանգելով մեր իսկ ժողովրդի անվտանգությունը: Ինքս չեմ մասնակցել այսօր կայացած նիստին եւ գտնում եմ, որ խնդրի լուծումը պետք է բխի բացառապես ժողովրդի շահերից: Կոչ եմ անում բոլորին խոհեմություն ցուցաբերել: Խիղճ եւ խաղաղություն բոլորիս,- գրել է Ցոլակյանը:

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԶՐՈՒՑԵԼ Է ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՀԵՏ

*Սեպտեմբերի 28-ին, Դուշամբեում ԱՊՀ երկրների ղեկավարների հանդիպմանը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը զրուցել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:*

*Նիկոլ Փաշինյանը Իլհամ Ալիեւի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել սահմանագծում լարումը նվազեցնելու եւ միջադեպերը կանխելու վերաբերյալ: Այս մասին վարչապետն ասել է «Ֆեյսբուք»-ում ուղիղ եթերի ժամանակ:*

*- Այս անգամ որոշակի առարկայական խոսակցություն ստացվեց, եւ, դրա արդյունքում, մենք մի քանի կարեւոր կետեր արձանագրեցինք: Պայմանավորվեցինք, որ մեր պաշտպանության նախարարներին հանձնարարություն կտանք, որ վերջիններս քայլեր ձեռնարկեն սահմանագծում լարումն իջեցնելու եւ սահմանային միջադեպերը կանխելու վերաբերյալ: Կարծում եմ, որ սա կարեւոր պայմանավորվածություն է,- ասել է Փաշինյանը:*

*Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ խոսակցության ընթացքում արձանագրվել է նաեւ բանակցային գործընթացի նկատմամբ հավատարմությունը:*

### «ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԵՎ ՀԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

*Ընդունելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկը՝ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը՝ հոկտեմբերի 3-ին ստորագրել է հրամանագրեր, որոնցով պաշտոնանկ են արվել կառավարությունում «Բարգավաճ Հայաստան» եւ ՀՅԴ կուսակցությունները ներկայացնող նախարարները:*

*Հայաստանի նախագահի հրամանագրերով աշխատանքից ազատվել են Հայաստանի էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Արթուր Գրիգորյանը, տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աշոտ Հակոբյանը, տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանը, գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը, արտակարգ իրավիճակների նախարար Հրաչյա Ռոստոմյանը, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Լեւոն Վահրադյանը:*

### ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՐԶՊԵՏԵՐ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՑ

*Հայաստանի կառավարության հոկտեմբերի 4-ի որոշումներով, մի շարք մարզպետեր ազատվեցին պաշտոններից: Մասնավորապես՝ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանը, Լոռու մարզպետ Հրանտ Մարգարյանը, Վայոց Ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը, Արմավիրի մարզպետ Գագիկ Միրիջանյանը, Գեղարքունիքի մարզպետ Իշխան Սաղաթելյանը, Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը:*

*Նշված պաշտոնյաները մարզպետի պաշտոնը ստանձնել էին համաձայնության շրջանակում եւ ներկայացնում էին «Բարգավաճ Հայաստան» եւ ՀՅԴ կուսակցությունները:*

### ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՄՅՈՒՍ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանրապետության մյուս քաղաքների բնակիչներին կոչ է արել ի նշան միասնության դուրս գալ իրենց քաղաքների կենտրոնական հրապարակներ:*

*- Ի նշան միասնության, կոչ եմ անում մյուս քաղաքների մեր հայրենակիցներին դուրս գալ կենտրոնական հրապարակներ եւ պահանջել արտահերթ խորհրդարանական ընտրություններ,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ հոկտեմբերի 2-ին, Բաղրամյան պողոտայում հրավիրած հանրահավաքում:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

*8.10.2018*
***Սուրբ Փոկաս հայրապետի եւ առաքյալներին հետեւող Երանոսի հիշատակության օր***

*13.10.2018*
***Սուրբ թարգմանիչ Վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն***



«Մեր լեզուն ճանապարհ է դեպի հավերժություն, գրավական՝ մեր ինքնության, Նոյան տապան՝ մեր փրկության, լուսաստղ՝ մեր լինելության»:

Գարեգին Ա
Ամենայն Հայոց Կաթողիկոս

Սուրբ թարգմանիչ Վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ:

«ԹԲԻԼԻՍՈԲԱՆ» 2018

# «ԹԲԻԼԻՍՈԲԱՆ»՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՆԳ ՇՐՋԱՆՈՒՄ

***«Թբիլիսոբա 2018»-ի շրջանակներում, ծրագրված միջոցառումները անցկացվելու են մայրաքաղաքի հինգ շրջանում:***




Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքի կառավարության հոկտեմբերի նիստին խոսեց «Թբիլիսոբա 2018»-ի շրջանակներում, հոկտեմբերի 6-ին եւ 7-ին ծրագրվող միջոցառումների մասին: Կախա Կալաձեի հայտարարությամբ, մշակութային զվարճալի միջոցառումները Թբիլիսիում տեւելու են երկու օր եւ անցկացվելու են՝ «Դեդա էնայի» եւ Ռիղեի այգիներում, Առաջին հանրապետության հրապարակում, Եվրոպայի հրապարակում եւ Լեղվթախեւիում:

- Միջոցառումները, որոնք տեղի են ունենալու մայրաքաղաքում, «Թբիլիսոբա 2018»-ի շրջանակներում, հոկտեմբերի 6-7-ը լինելու են բավականին հագեցած: Հոկտեմբերի 6-ին Եվրոպայի հրապարակում կայանալու է «Թբիլիսյան վոդեվիլներ»-ի պրեմիերան, որին մասնակցելու են վրաց բեմի աստղերը: Բեմում կենդանանալու է մուլտիէթնիկ Թբիլիսին: Հատուկ կանգնեցրած բեմում տեղի է ունենալու նաեւ համերգ,- հայտարարել է Կախա Կալաձեն:

Նրա խոսքով, հոկտեմբերի 7-ին, «Կոնկայի» տարածքում բացվելու է Ռեւազ Լաղիձեի կիսանդրին, եւ տեղի է ունենալու «Վրացական ձայների» համերգը: Իսկ Հանրապետության հրապարակում տեղի է ունենալու պատվավոր թբիլիսցու պարգեւատրման արարողությունն ու գալա համերգը, որը նույնպես նվիրվելու է Ռեւազ Լաղիձեի ստեղծագործությանը:

ՇԱԽՄԱՏ




# ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԲՐՈՆԶԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻՆ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԵՔ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԵՐԿՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԱՌԱՆՑ ՊԱՐԳԵՎԻ

Եզրագծին է մոտենում Բաթումիում անցկացվող շախմատային օլիմպիադայի մրցաշարը, որին մասնակցում են 185 երկրի տղամարդկանց եւ 151 երկրի կանանց հավաքականները: Մասնակիցների թվում են նաեւ Վրաստանի (այն մասնակցում է տղամարդկանց եւ կանանց 3-ական հավաքականներով) եւ Հայաստանի տղամարդկանց ու կանանց թիմերը:

Հոկտեմբերի 5-ին անցկացվեց մրցաշարի եզրափակիչ փուլը: Վրաստանի տղամարդկանց առաջին հավաքականը, ընդհանուր առմամբ հավաքելով 14 միավոր (5 հաղթանակ, 4 ոչ-ոքի, 2 պարտություն) զբաղեցրեց 28-րդ տեղը, երկրորդ հավաքականը՝ 13 միավորով (5 հաղթանակ, 3 ոչ-ոքի, 3 պարտություն)՝ 43-րդ տեղը, իսկ երրորդ հավաքականը՝ դարձյալ 13 միավորով (6 հաղթանակ, 1ոչ-ոքի, 4 պարտություն) հանգրվանեց 51-րդ տեղում:

Հայաստանի տղամարդկանց հավաքականը՝ 16 միավորով (7 հաղթանակ, 2 ոչ-ոքի, 2 պարտություն) հանգրվանեց մրցաշարային աղյուսակի 8-րդ հորիզոնականում:

Տղամարդկանց մրցաշարում՝ 18 միավորով, առաջին երեք տեղերը զբաղեցրին Չինաստանի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի թիմերը:

Ինչ վերաբերում է կանանց մրցաշարին, ապա Վրաստանի կանանց առաջին հավաքականը 17 միավորով արժանացավ բրոնզե մեդալի (7 հաղթանակ, 3 ոչ-ոքի, 1 պարտություն): Վրաստանի երկրորդ թիմը՝ 16 միավորով (7 հաղթանակ, 2 ոչ-ոքի, 2 պարտություն) հանգրվանեց 9-րդ հորիզոնականում, իսկ երրորդ հավաքականը 13 միավորով (6 հաղթանակ, 1 ոչ-ոքի, 4 պարտություն) 41-րդն էր:

Հայաստանի կանանց թիմը՝ 16 միավորով (7 հաղթանակ, 2 ոչ-ոքի, 2 պարտություն) գրավեց 6-րդ տեղը:

Կանանց օլիմպիական մրցաշարային աղյուսակը՝ 18 միավորով, գլխավորեց Չինաստանի հավաքականը: Նույնպես 18 միավորով արծաթե մեդալը նվաճեց Ուկրաինայի թիմը:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Agro Expo ՍՏՈՒԳԱՏԵՍ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ




***Թբիլիսիի Expo Georgia ցուցահանդեսային սրահում, նոյեմբերի 20-22-ը, տեղի կունենա գյուղատնտեսական ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսը:***

Գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության, խմիչքների, վերամշակման եւ փաթեթավորման տեխնոլոգիաների Agro+Food+Drink+Tech Expo Georgia 18-րդ միջազգային ցուցահանդեսում գյուղատնտեսական մթերք վերամշակող, ագրարային ոլորտը սպասարկող եւ ծառայություններ մատուցող բազմաթիվ ընկերություններ կկիսվեն իրենց փորձով:

- Սա անթերի մի տարածք է, որտեղ դուք կարող եք արդյունավետ կերպով օգտագործել բոլոր հնարավորությունները,- վստահեցնում են կազմակերպիչները:

Ցուցահանդեսի նպատակը սպառողին վրացական շուկայի հետ ծանոթացնելն է, ֆերմերների միջեւ գործնական կապեր ստեղծելը: Տեղական ընկերությունները գործնական հարաբերությունների հնարավորություն կունենան նաեւ օտարերկրյա ընկերությունների հետ:

Նախորդ տարի միջազգային փառատոնին մասնակցել է ավելի քան 16 երկիր ներկայացնող մոտ 100 կազմակերպություն: Վրաստանից շուրջ 2300 ֆերմեր ցուցադրել է վրացական արտադրանքը:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մաքուր, անաղարտ, անբիծ: 4.Միրգ: 6.Աշուղ Ջիվանու երգերից: 11.Մաշտոցյան այբուբենի գինվոր: 12.Հայկական ամսանուն: 13.Անեզր, անսահման: 14.Հայոց կարմիր ներկը: 15.Վրաստանը հնում: 16.«... օրավար հող» (Րաֆֆու պատմվածքներից): 17.Օդազուրկ, առանց օդի: 18.Վրաց անվանի դերասանուհի ... Վաչնաձե: 23.Թերթ, պարբերական, լրատվամիջոց: 24.«Հավաքեցինք թիթեռ, ...» («Ողջո՜ւյն, դպրոց»): 25.Ծննդով Ախալքալաքիից սպորտային մեկնաբան ... Գիլոյան: 28.Ծածկած, թաքցրած լուր, իրողություն: 30.Ճշտված, պարզաբանված, ոչ հնարովի: 31.Թոռի երեխան: 32.Հայաստանի մայրաքաղաքներից: 35.Խոսքի մաս: 42.Թիֆլիսի բազմալեզու գուսանը՝ Սայաթ-...: 43.Անգլիացի հանրահայտ ֆիզիկոս ... Նյուտոն: 44.Բաժակ, թաս, ըմպանակ: 45.Հայ անվանի քանդակագործ Երվանդ ...: 49.Հակոբ Պարոնյանի «... մուրացկաններ» երկը: 52.Հրաբխի ժայթքածը: 53.Ամերիկացի գրող ... Տվեն: 54.Զորավար Անդրանիկի ծննդավայրը՝ Շապին - ...: 55.Ոչ հաճելի, անդուր, անհաճո: 56.Փողոց Թբիլիսիում՝ ... Միցկեւիչի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Իսպանացի թենիսիստ Ռաֆայել ...: 3.Ղազախստանի մայրաքաղաքը: 5.Հնագույն պետություն: 6.Առաքինի, վեհ, պարկեշտ: 8.Անավարտ, կիսատ: 9.Նվիրաբերել, ջանք ու եռանդ չխնայել: 10.Վրաստանի ...իի մունիցիպալիտետ: 11.Աֆրիկյան պետություն: 19.Վրաց գրող ... Փշավելա: 20.Մարդու ներքին օրգան: 21.Թբիլիսիում ծնված հայ կինոռեժիսոր, բազմաթիվ կոլաժների հեղինակ: 22.Մոտ, մտերիմ: 26.Արեւմտահայ գրող ... Մեծարենց: 27.Մաշտոցի գավառը: 29.Գեւորգ Մարզպետունու որդին: 33.Գյուղացու վառելիք: 34.Գրիգոր Լուսավորչի հայրը: 36.Ժողովրդին պայքարի ... անել: 36.Բնակավայր: 38.Օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 39.Իտալացի հանրահայտ դերասան ... Պլաչիդո: 40.Ձեռնափայտ, մահակ, ցուպ: 41.Վանքային համալիր Հայաստանի Լոռու մարզում: 46.ԱՄՆ-ի Ազգային ժողովը: 50.Մորմ, ոստայն հյուսող միջատ: 51.Սանձ, երասան, սանձաթոկ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Մաեստրո: 9.Իրարու: 10.Ահեղ: 11.Անարգում: 13.Բորակ: 16.Դրա: 17.Նառ: 19.Հոսել: 22.Պիեխա: 24.Նարինե: 25.Առկա: 27.Դյուրեր: 29.Քառակի: 32.Ատակամա: 33.Երկյուղ: 35.Դարդ: 37.Երկ: 39.Մարգո: 40.Գեղմ: 43.Գեղ: 44.Կազմ: 47.Լիա: 49.Քիշնեւ: 50.Շտապ: 53.Հասու: 54.Էդի: 55.Տացու: 57.Շեջ: 58.Կյուրեղ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ռաունդ: 2.Աստրա: 3.Բրաուն: 4.Ծիրք: 5.Չախր: 6.Սունկ: 8.Ոհմակ: 12.Արմե: 14.Ոլոր: 15.Աղեն: 18.Կառե: 19.Հասակ: 20.Սիրամարգ: 21.Լեղի: 23.Խարույկ: 26.Կրակ: 28.Յուրե: 29.Քամ: 30.Ռադա: 31.Կարգել: 34.Կրիզիս: 36.Դող: 38.Ուղի: 41.Ելեւէջ: 42.Մաշիկ: 45.Աքար: 46.Աշուշ: 48.Հատու: 51.Պար: 52.Քուղ: 56.Յե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445